ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 19 «10» 01 2014թ.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի կողմից 2013թ. ընթացքում ՀՀ ոստիկանություն ներկայացված ընթացիկ հաշվետվությունների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դիտորդների խմբի կողմից ՁՊՎ-ներ կատարած այցելությունների ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները տեղում չեն ներկայացվում տվյալ ոստիկանության բաժնի ղեկավարությանը կամ համապատասխան ծառայողներին, ինչի արդյունքում վերջիններիս հնարավորություն չի տրվում անմիջապես շտկել արձանագրված թերությունները, տեղում ներկայացնել համապատասխան մեկնաբանություններ արձանագրված խախտումների վերաբերյալ կամ տալ հիմնավոր հերքումներ:

Նման գործելաոճը չի բխում ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանության շահերից և հակասում է հասարակական դիտորդների խմբի գործունեության հիմնական նպատակներին ու սկզբունքներին:

Հարկ է նշել նաև, որ դիտորդների խմբի կողմից արձանագրված խախտումները որոշ դեպքերում կրում են ընդհանուր բնույթ և չեն նշվում այն իրավական ակտերը, որոնց պահանջները խախտվել են ոստիկանության ծառայողների կողմից, ուստի առաջարկվում է Ձեր ընթացիկ հաշվետվություններում ներկայացված խախտումների հետ մեկտեղ հղում կատարել նաև այն իրավական ակտի համապատասխան հոդվածին կամ կետին, որի պահանջը խախտվել է:

Հաշվի առնելով, որ դիտորդների խմբի առաքելության հիմնական նպատակներից է ՁՊՎ-ներում մարդու իրավունքների խախտման դեպքերի բացահայտումը և կանխումը, ՁՊՎ-ներում պահվող անձանց կենցաղային պայմանների բարելավումը և հույս հայտնելով, որ դիտորդների խումբը հետևողական է իր իսկ կողմից հաստատված էթիկայի կանոններին (թիվ 4.2 կետ), առաջարկվում է թերությունների և խախտումների հայտնաբերման դեպքերում գործուն կերպով համագործակցել ՁՊՎ-ների վարչակազմի հետ և վերջիններիս հնարավորություն ընձեռել հայտնաբերված թերությունները և խախտումները շտկել տեղում, քանի որ մինչ դիտորդների խմբի ընթացիկ հաշվետվությունները քննարկվում են ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում՝ հայտնաբերված թերությունները կամ խախտումները որոշակի ժամանակահատված մնում են չշտկված վիճակում և հրատապ լուծում չեն ստանում:

**ՀՀ ոստիկանության շտաբ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1401 13.02.2014թվ.

ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
պարոն Վ.Եղիազարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 669
«17» 02 2014թ.

Հարգելի պարոն Եղիազարյան,

10.01.2014թ-ին թիվ 2/2-1-19 թվագրումով գրությունն է ստացվել Դիտորդական խմբի գրասենյակ, որով Ձեր կողմից հայտնվում է, թե դիտորդական խումբը չի պահպանում Խմբի Էթիկայի կանոնների 4.2 կետի պահանջները, և արձանագրված խախտումները կրում են ընդհանրացված բնույթ:

Դիտորդական խումբը ինքն է որոշում, թե որ հարցով ում դիմի, ընդորում Դիտորդական խումբը իր այցելությունների արդյունքները ներկայացնում է հաշվետվության տեսքով: Համագործակցությունը ինքնին երկկողմանի գործընթաց է, իսկ համագործակցությունը կարող է լինել արդյունավետ, եթե երկու կողմերի մոտ առկա են ցանկություն և կամք: 2013 թվականի երկրորդ կեսից նկատվեց, որ ՁՊՎ վարչակազմի մոտ բացակայում է համագործակցության ցանկությունը և կամքը, իսկ համագործակցության, խնդիրների հայտնաբերման և լուծման ցանկության, կամքի բացակայության պայմաններում, ինչպես նաև բացահայտված խնդիրներին լուծում փնտրելու և լուծելու փոխարեն հերքելու դեպքում չի կարող խոսք գնալ համագործակցության մասին:

Ինչ վերաբերում է գրությամբ հայտված այն դիրքորոշմանը, թե Դիտորդական խմբի կողմից արձանագրված որոշ խախտումներ կրում են ընդհանրական բնույթ և հղում չեն կատարվում այն իրավական ակտերին, որոնց պահանջները խախտվել են, ապա նշենք,

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

որ Դիտորդական խմբի կարծիքով հաշվետվություններին մեկնաբանություն տրվող մարմինը քաջատեղյակ է իրավական ակտերին և բնավ էլ կարիք չկա գրությունները ծանրաբեռնել այն՝ իրավական ակտերին հղում կատարելով: Սակայն, քանի որ առաջացել է նման խնդիր, դիտորդական խումբը չի զլանա և այսուհետ հաշվետվության մեջ կմատնանշի նաև կիրառելի իրավական ակտերը:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1՝ Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org